ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ 01-1/2023
ՎԱՐՈՒՅԹԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 07.06.2023թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյանի, Ա. Փաշինյանի, Մ. Գալստյանի և Լ. Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով Հանձնաժողովի կողմից Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Գերասիմի Չարչյանի նկատմամբ 2023 թվականի մարտի 13-ին հարուցված «Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ» թիվ 01/2023 վարույթի նյութերը,

պարզեց.

1. 2023 թվականի մարտի 13-ին Հանձնաժողովը հարուցել է թիվ 01/2023 վարույթը՝ Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Գերասիմի Չարչյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ:

2. 2023 թվականի մարտ-մայիս ամիսներին վարույթում քննարկվող հարցերի ուսումնասիրման ընթացքում բացահայտման ենթակա հանգամանքների վերաբերյալ Հանձնաժողովը 2023 թվականի մարտի 17-ին Ե-01/617-2023 գրությամբ պարզաբանումներ է հայցել Արմեն Գերասիմի Չարչյանից, 2023 թվականի ապրիլի 20-ին Ե-01/946-2023 գրությամբ հարցում է կատարել Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան, իսկ 2023 թվականի մայիսի 25-ին Ե-01/1236 գրությամբ՝ «Իզմիրլյան» բժշկական կենտրոնին:

3. Վարույթի շրջանակներում Հանձնաժողովի կողմից իրականացվել է գործում քննարկվող հանգամանքների վերաբերյալ ուսումնասիրություն, ինչի արդյունքում

պարզ է դարձել, որ «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ պաշտոնական կայքում տեղ են գտել հրապարակումներ[1] Արմեն Չարչյանի կողմից վիրահատություններ կատարելու վերաբերյալ: Դրանցից մեկը հրապարակվել է 2023 թվականի մարտի 2-ին՝ «Վիրահատությունը կատարել է պրոֆեսոր Արմեն Չարչյանը» վերնագրով: Իսկ մյուս 2 տեսանյութերը հրապարակվել են 2022 թվականի հոկտեմբերի 10-ին և 2022 թվականի հունիսի 8-ին նույնաբովանդակ վերնագրերով:

Նշված տեսանյութերի հրապարակման ժամանակահատվածում Արմեն Չարչյանը զբաղեցրել է Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնը:

4. Վարույթի շրջանակներում ձեռք բերված նյութերում առկա 2022 թվականի ապրիլի 12-ին Արմեն Չարչյանի և «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի (այսուհետ՝ նաև Պայմանագիր) համաձայն՝ Արմեն Չարչյանը պարտավորվել է «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի համար կատարել գիտական աշխատանք,որի շրջանակներում, որպես պայմանագային պարտավորություններ սահմանվել են մի շարք գործառույթների իրականացումը:

---

1 https://www.izmirlianmedicalcenter.com/arm/news.more/779/%D5%8E%D5%AB%D6%80%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-%D5%AF%D5%A1%D5%BF%D5%A1%D6%80%D5%A5%D5%AC-%D5%A7--%D5%BA%D6%80%D5%B8%D6%86%D5%A5%D5%BD%D5%B8%D6%80-%D4%B1%D6%80%D5%B4%D5%A5%D5%B6-%D5%89%D5%A1%D6%80%D5%B9%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A8%D6%89
https://www.izmirlianmedicalcenter.com/arm/news.more/761/%D5%8A%D6%80%D5%B8%D6%86%D5%A5%D5%BD%D5%B8%D6%80-%D4%B1%D6%80%D5%B4%D5%A5%D5%B6-%D5%89%D5%A1%D6%80%D5%B9%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A8-%D5%AF%D5%A1%D5%BF%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A7-%D5%B0%D5%A5%D6%80%D5%A9%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6--%D5%BE%D5%AB%D6%80%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8
https://www.izmirlianmedicalcenter.com/arm/news.more/757/%D4%B2%D5%A1%D6%81%D5%A1%D5%BC%D5%AB%D5%AF-%D5%BE%D5%AB%D6%80%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%C2%AB%D4%BB%D5%A6%D5%B4%D5%AB%D6%80%D5%AC%D5%B5%D5%A1%D5%B6%C2%BB-%D5%A2%D5%AA%D5%B7%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AF%D5%A5%D5%B6%D5%BF%D6%80%D5%B8%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4%D6%89-%D5%8E%D5%AB%D6%80%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-%D5%AF%D5%A1%D5%BF%D5%A1%D6%80%D5%A5%D5%AC-%D5%A7--%D5%BA%D6%80%D5%B8%D6%86%D5%A5%D5%BD%D5%B8%D6%80,-%C2%AB%D4%BB%D5%A6%D5%B4%D5%AB%D6%80%D5%AC%D5%B5%D5%A1%D5%B6%C2%BB--%D4%B2%D4%BF

5. Պարզելու համար արդյո՞ք Պայմանագրով նախատեսված աշխատանքների բովանդակությունն ամբողջությամբ ընդգրկում են գիտական աշխատանքների շրջանակը, Հանձնաժողովի կողմից 2023 թվականի մայիսի 25-ին Ե-01/1236-2023 գրությամբ հարցում է կատարվել «Իզմիրլյան» բժշկական կենտրոնին՝ պահանջելով տրամադրել տեղեկատվություն հետևյալ հարցերի առնչությամբ.

- Պահանջվել է ներկայացնել Պայմանագրի հիման վրա կատարված քանակական աշխատանքների վերաբերյալ տվյալները, դրանց կատարված լինելը հիմնավորող փաստաթղթերը, այդ թվում՝ բժշկական փաստաթղթերը (օր. Մեծահասակի հիվանդության պատմագրերը և այլն) պացիենտի անձնական տվյալները փակված վիճակում:
- Տեղեկատվություն այն մասին, թե կատարված աշխատանքները, Պայմանագրի ո՞ր կետով են նախատեսված եղել, կամ Պայմանագրի ո՞ր կետի իրականացմանն են ուղղված: Մասնավորապես, արդյո՞ք Արմեն Չարչյանի կողմից պայմանագրի հիման վրա կատարված գիտահետազոտական աշխատանքներում (ներառյալ՝ վիրահատական աշխատանքների շրջանակում) ընդգրկված են եղել հատուկ իրականացված նորարարական-գիտական աշխատանքներ:
- «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ բաժնետիրոջ կողմից ընդունված որոշման հիման վրա 2022 թվականի ապրիլի 10-ին «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կանոնադրության 2.2 կետը լրացվել է, որի համաձայն «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ն իրավունք է ձեռք բերել իրականացնելու գիտական աշխատանքներ և գործունեության ծրագրեր: Նշվածի կապակցությամբ պահանջվել է Հանձնաժողովին տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե ի՞նչն է հիմք հանդիսացել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության համար գիտական աշխատանքներ և գործունեության ծրագրեր կատարելուն ուղղված՝ կանոնադրությամբ գործունեության նոր ուղղություն սահմանելու համար:

6. 2023 թվականի հունիսի 6-ին թիվ Մ-2479-2023 գրությամբ «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի կողմից ներկայացվել է թիվ 186/23 պատասխան գրություն (այսուհետ՝ նաև Գրություն), որի

համաձայն՝ Արմեն Չարչյանը Պայմանագրի հիման վրա կատարել է հետևյալ աշխատանքները.

- Հիմնվելով գիտական ուսումնասիրությունների արդյունքների վրա՝ կազմել է ***վնասվածքաբանության և օրթոպեդիայի ուսումնական ձեռնարկ,*** որը դեռ ընթացքի մեջ է: Այժմ տարվում են աշխատանքներ ցուցադրական նյութերի տեղադրման, վերջնական խմբագրման և հրատարակչության նախապատրաստության ուղղությամբ:

Նշված ձեռնարկը ոչ ավարտուն վիճակում ներկայացվել է Գրությանը կից նյութերում:

- Արմեն Չարչյանը մշակել և հրատարակել է ***կոնքազդրային հոդի էնդոպրոթեզավորման մեթոդական ձեռնարկ***, որն ամբողջովին հիմնված է հեղինակի գիտելիքի, փորձի և գիտական ներդրումների վրա:

Նշված ձեռնարկը չի ներկայացվել Գրությանը կից նյութերում:

- Նախապատրաստվել է հրատարակման ***«Ազդրոսկրի պրոքսիմալ կոտրվածքների բուժումը մեծահասակ և ծերունական տարիքային խմբերում» գիտական հոդվածը***, որը նախատեսվում է հրատարակել ԵՊԲՀ գիտաբժշկական հանդեսում:

Նշված գիտական հոդվածը ներկայացվել է Գրությանը կից նյութերում:

- «Իզմիրլյան» բժշկական կենտրոնում Արմեն Չարչյանի կողմից գիտական վերլուծության են ենթարկվել բաժանմունքների գործունեությունը, ուսումնասիրվել է դրանց բուժական արդյունավետությունը, ժամանակակից գիտական մեթոդների մեթոդոլոգիաների կիրառումը բուժական գործունեության մեջ, արվել են համապատասխան եզրահանգումներ և յուրաքանչյուր բաժանմունքի համար կազմվել են բուժման որակի և հիվանդների անվտանգության բարձրացմանն ուղղությամբ համապատասխան ***ճանապարհային քարտեզներ:*** Նշվածի կապակցությամբ ներկայացվել են դիտարկումների քանակական տվյալներ՝ ըստ բաժանմունքների:

Նշված դիտարկումները հիմնավորող փաստաթղթեր Գրությանը կից չեն ներկայացվել:

Գրությանը կից ներկայացված նյութերով ներկայացվել են «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի Կոլոպրոկտոլոգիա բաժանմունքում 2022 թվականի վերջին

եռամսյակի ախտորոշումների և վիրահատությունների վերաբերյալ տվյալները և վիրահատող բժիշկների տվյալները՝ առանց ստորագրության: Ներկայացված ցանկերում բացակայում է Արմեն Չարչյանի անունը:

Գրությանը կից նյութերով ներկայացվել է նաև «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի Օրթոպեդիա բաժանմունքում իրականացված բժշկական միջամտությունների վերաբերյալ տվյալները՝ քանակական տվյալներով, և բժիշկների անուններով, որտեղ, ևս, բացակայում է Արմեն Չարչյանի անունը: Ներկայացվել է նաև Ուրոլոգիայի բաժանմունքում 2022 թվականի ապրիլի 1-ից մինչև հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում ախտորոշումների քանակական տվյալները և բժիշկների անունները:

Գրությանը կից նյութերով ներկայացվել է նաև ընդհանուր վիրաբուժության բաժանմունքում 2023 թվականի հունվարից մինչև մարտ ընկած ժամանակահատվածում իրականացված բժշկական միջամտությունների քանակական տվյալները և բժիշկների անունները:

Գրությամբ ներկայացվել է նաև տեղեկատվություն այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունում դեռևս ներդրված չեն հիվանդների բուժման արձանագրությունները և ուղեցույցները, ինչը խիստ դժվարեցնում է բուժական գործունեությունը, բուժման գնահատման արդյունքները և բժշկի որակավորման գնահատման արդյունքները: Դեռևս 1996 թվականից այդ խնդիրը բազմիցս եղել է Առողջապահության նախարարության ուշադրության կենտրոնում, սակայն մինչև այժմ որևէ նախարար չի հաջողել: Արմեն Չարչյանի կողմից ներկայումս ուսումնասիրվում են «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի գործունեության հիմնական առաջնահերթ երեք ուղղությունները՝ օրթոպեդիա, կոլոռեկտալ վիրաբուժություն և ուրոլոգիայի եվրոպական, բրիտանական, հնդկական ուղեցույցները: Կատարվում է լայնածավալ համեմատական ուսումնասիրություն և այդ ուղեցույցների խմբավորման և «Իզմիրլյան» բժշկական կենտրոնում հնարավոր իմպլեմենտացիայի (ներդրման, տեղայնացման) ուղղությամբ:

7. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի կանոնակարգումներով սահմանված են առողջապահության բնագավառում կիրառվող այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են

բժշկական փաստաթուղթը,առողջապահության բնագավառում մասնագիտական գործունեությունը, կլինիկական ուղեցույցը, բժշկական օգնության և սպասարկման որակի շարունակական բարելավումը, ընթացակարգը, ինչպես նաև առողջապահության բնագավառի գործունեությանն առնչվող այլ նորմատիվային հասկացություններ:

8. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշմամբ հաստատվել է Առողջապահության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կանոնադրությունը, որի 11-րդ կետով սահմանված են մարմնի գործառույթները: Ի թիվս այլ գործառույների սահմանված է, որ Նախարարությունն իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով իրականացնում է բժշկական օգնության կազմակերպման և բուժօգնության որակի գնահատման չափորոշիչների ու չափանիշների մշակման, դրանց իրականացման դիտարկման, ինչպես նաև առողջապահության բնագավառի առանձին ոլորտների զարգացման հայեցակարգերի մշակման ու դրանց իրականացման նկատմամբ դիտարկման գործառույթները:

9. Հաշվի առնելով առողջապահության բնագավառում գործող իրավակարգավորումները՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում սույն վարույթի շրջանակներում դիմել լիազորված պետական մարմին, պարզելու համար՝ արդյո՞ք 2023 թվականի հունիսի 6-ին թիվ Մ-2479-2023 գրությամբ «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի կողմից ներկայացված թիվ 186/23 պատասխան գրությամբ նշված՝ Արմեն Չարչյանի կողմից առողջապահության բնագավառում կատարված աշխատանքները (մատուցված ծառայությունները) ենթակա են առանձնահատուկ կարգավորման, ինչպես նաև պարտադիր փաստաթղթավորման՝ միաժամանակ խնդրելով տրամադրել անհրաժեշտ հիմքեր (նյութեր՝ չափորոշիչներ, ձևաթղթեր և այլ վերաբերելի նյութեր):

10. Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ առկա է անհրաժեշտություն «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ից, ինչպես նաև վարույթի մասնակից՝ Արմեն Չարչյանից լրացուցիչ տեղեկատվություն պահանջել հրապարակված նյութերի (Արմեն Չարչյանի կողմից վիրահատություններ կատարելու վերաբերյալ տեսանյութերի) և բժշկական կենտրոնի կողմից Գրությամբ ներկայացված տեղեկատվության

վերաբերյալ: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ վարչական վարույթը կարող է երկարաձգվել, եթե փոխօգնության կարգով միջոցներ ձեռնարկելու համար անհրաժեշտ է ավելի երկար ժամանակ, քան վարչական վարույթի համար օրենքով սահմանված ժամկետի ավարտը:

11. Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի «գ» և «դ» կետերով նախատեսված դեպքերում վարչական վարույթի ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 30 օր ժամկետով:

Հաշվի առնելով նշված փաստական հանգամանքները և ղեկավարվելով «Վարչարարության և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

2023 թվականի մարտի 13-ին Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Գերասիմի Չարչյանի նկատմամբ հարուցված «Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ» թիվ 01/2023 վարույթի ժամկետը երկարաձգել 30 օր ժամկետով՝ մինչև 2023 թվականի հուլիսի 7-ը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**